<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-124-Ն աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 171-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով.

«7) նախընտրական արձակուրդը:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել նոր՝ 176.2-րդ հոդվածով:

«Հոդված 176.2. Նախընտրական արձակուրդը

1. Հանրային պաշտոն զբաղեցնողներին և հանրային ծառայության մեջ գտնվող անձանց նախընտրական քարոզարշավին մասնակցելու և նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով տրամադրվում է չվճարվող արձակուրդ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: